## *Արձանագրություն N 2*

### *ԱՀԳՀԱՇՁԲ -18/17 ծածկագրով գնման գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի*

գ.Ախուրյան

<<29>> <<հոկտեմբերի>> 2018թ.

ժամը 14:00

Նիստին մասնակցում էին հանձնաժողովի նախագահը, հանձնաժողովի անդամները, քարտուղարը գնման մասնակիցները և նրանց ներկայացուցիչները:Գնման առարկան է ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրյան գյուղի Ախուրյան խճուղի թիվ 83 բազմաբնակարան բնակելի շենքի տանիքի վերանորոգման աշխատանքների ձեռք բերումը:

Հանձնաժողովի նախագահ Լիպարիտ Տիգրանյանը հայտարարեց նիստի բացման մասին:

1. **<<ԱՀԳՀԱՇՁԲ-18/17>>**ծածկագրով գնման հայտերի բացման նիստը անցկացվում է ՀՀ Շիրակի մարզ,գ.Ախուրյան, Գյումրու խճուղի 42 հասցեում, Ախուրյանի համայնքապետարանի երկրորդ հարկի N21 սենյակում:

2. Գնման ընթացակարգին մասնակցելու համար հայտերի գրանցամատյանում գրանցվել է 4 հայտ, ըստ գնահատող հանձնաժողովի հայտեր պարունակող ծրարները կազմված և ներկայացված են սահմանված կարգին համապատասխան.

| N | Մասնակցի անունը | Մասնակցի հասցեն | էլ.փոստ |
|---|---|---|---|
| 1. | <<Պագամի>>ՍՊԸ | ք.Վանաձոր,Տավրոսի 7-21 | paravyangrisha@mail.ru |
| 2. | <<ՇԻՆ ՍՏԱՐ>>ՍՊԸ | ՇՄ,ք.Գյումրի,Կոմիտասի 1-ին նրբ.22 | shinstar2015@mail.ru |
| 3. | <<Շինարար-97>>ՍՊԸ | ՀՀ ք.Գյումրի, Տեքստիլագործների 29/3 | hovhannes.aharonyan@gmail.com |
| 4 | <<Էլիտ Արման Շին>>ՍՊԸ | ք.Գյումրի, Մ.Խորենացի 26,բն87 | elitarmanshin.IIc@mail.ru |

3. **Տվյալներ պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

<<**ԱՀԳՀԱՇՁԲ-18/17**>> ծածկագրով գնման ընթացակարգի համար ներկայացրած հայտերը կազմված են գնման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան: Ներկայացրած բոլոր փաստաթղթերը կազմված են բնօրինակից և մեկ օրինակ պատճենից:

4.Նիստին ներկա անդամների և գնման մասնակիցների համար հանձնաժողովի նախագահ Լիպարիտ Տիգրանյանը հրապարակվեց մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները:

5. **Հրավերի պահանջներին համապատասխանող հայտերով ներկայացրած գնային առաջարկները՝**

| Հ/Հ | Կազմակերպության անվանումը | Գնային առաջարկը /առանց ԱԱՀ/ | Ընդհանուր գինը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|
| 1 | <<Պագամի>>ՍՊԸ | 5490000 | 5490000 |
| 2 | <<ՇԻՆ ՍՏԱՐ>>ՍՊԸ | 4900000 | 5880000 |
| 3 | <<Շինարար-97>>ՍՊԸ | 5683000 | 6819600 |
| 4 | <<Էլիտ Արման Շին>>ՍՊԸ | 6082500 | 7299000 |

## ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ

1. Գնահատող հանձնաժողովը հրավերի պահանջներին համապատասխան բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշեց և հայտարարեց առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին.
<<ԱՀԳՀԱՇՁԲ-18/17>> ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ընտրվեց <<ՇԻՆ ՍՏԱՐ>> ՍՊԸ -ն, որպես բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների կողմից ներկայացրած գնային առաջարկներից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:Երկրորդ տեղ զբաղեցրեց <<Պագամի>>ՍՊԸ -ն:

Որոշումը ընդունվել է 4 կողմ, 0 դեմ, ձայներով:

2. Հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը գնումների էլեկտրոնային տեղեկատուում հրապարակում է հայտերի բացման նիստի արձանագության,շահերի բախման բացակայության մասին հայտարարության և հայտերի գրանցամատյանի բնօրինակներից արտատպված տարբերակները: ՀՀ կառավարության 2017 թ. Մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված կարգով, էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների մասին:Էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:
Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացվող փաստաթղթերն ուղարկելու ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հրավիրել հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը:

Որոշումը ընդունվել է 4 կողմ, 0 դեմ, ձայներով:

4. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները,ազգանունները և ստորագրություններ

Հանձնաժողովի նախագահ՝ Լիպարիտ Տիգրանյան

անդամներ՝ Հայկանուշ Խաչատրյան

Ռուբիկ Քաբաբյան

Վաղինակ Հովսեփյան

քարտուղար՝ Անահիտ Յավրումյան